



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝  
ԲՆԱԳԱՇՊԱՆՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ե ԳՐԻԳՈՐՅԱՆ

» 12 2018թ

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 111

Ձեռնարկողը՝

<<Հայնախագիծ>> ԲԲԸ

Ք. Երևան, Չարեկցի 1

Գործունեությունը՝

Տեղ համայնքի միկրոռեզիոնալ մակարդակի համակցված  
փարածական պլանավորման փաստաթղթի (Սյունիք-8)  
շրջակա միջավայրի վրա ազդեցության ուղղակի  
գնահատման հաշվեփոխություն

Սյունիքի մարզ

<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
փորձաքննական կենտրոն>> ՊՐԱԿ-ի  
տնօրենի ժ/պ՝



Ռ. Ոսկանյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

թիվ ԲՓ 111

<<24>> 12 2018թ.

**Սյունիքի մարզի Տեղ համայնքի միկրոռեզիդենսի մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի (Սյունիք-8) շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվություն**

Ձեռնարկող՝

«Հայնախագիծ» ԲԲԸ

Ներկայացված նյութեր՝

Հիմնադրույթային փաստաթուղթ.

- ազդեցության ռազմավարական գնահատման (ՌԷԳ) հաշվետվություն, գծագրական նյութեր

Սյունիքի մարզի Տեղ համայնքի միկրոռեզիդենսի մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի (Սյունիք-8) /Տեղ համայնք՝ Տեղ, Արավուս, Խնածախ, Խոզնավար, Կոռնիծոր, Վաղատուր, Քարաշեն բնակավայրեր/, նախագիծը մշակվել է ՀՀ կառավարության որոշմամբ, ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի պատվերով (N ՀՀՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-18/1-4):

Առաջադրվող ծրագրային փաստաթղթում արտացոլվել են միկրոռեզիդենսի ներառված համայնքների տարածքային զարգացման քաղաքականության արդյունավետ իրականացմանը նպաստող քաղաքաշինական ծրագրային այն հիմնական գործողությունները, որոնք անհրաժեշտ են տարածքների մրցունակությունը բարձրացնելու և Հայաստանի մարզերի միջև զարգացման առկա անհամաչափությունները մեղմելու համար, մասնավորապես.

- համայնքում առկա քաղաքաշինական իրավիճակի համակողմանի վերլուծությունը,
- մարդու կենսագործունեության արդյունավետությունն ապահովող առաջնային անհրաժեշտ խնդիրների բացահայտումը,
- համայնքի հեռանկարային զարգացման հիմնական ռազմավարական ուղղությունների իրականացման քաղաքաշինական միջոցառումների ցանկի մշակումը,
- քաղաքաշինական, բնապահպանական, պատմամշակութային և այլ սահմանափակումներին վերաբերող հիմնական պահանջների բացահայտումն ու հանձնարարականների առաջադրումը:

Հիմնադրույթը ներկայացնում է փաստաթղթերի մշակման նպատակային ծրագիր, որը կհամապատասխանի մարզի հավասարակշռված և ներդաշնակ զարգացման նպատակներին ու խնդիրներին՝ մասնավորապես. տարածական զարգացման հիմնական գործիքակազմի միջոցով կանխորոշելով և կանոնակարգելով տարածքների և տնտեսական զարգացման հիմնական ուղղությունները՝ ռեկրեացիոն հետաքննության և քաղաքաշինության ռազմավարական, շրջակա միջավայրի պահպանման ու բարելավման,



ինժեներատրանսպորտային և կոմունալ ենթակառուցվածքների կատարելագործման, պատմամշակութային ժառանգության պահպանման, տարածքի ինժեներական նախապատրաստման, բնական և տեխնածին վտանգավոր երևույթներից տարածքի պաշտպանության, ինչպես նաև բնակչության անվտանգության ապահովմանն ուղղված միջոցառումների համալիրը:

Նախագծում համակողմանի վերլուծվել և ընդհանրացվել են համայնքների ընդհանուր բնութագրերը՝ հետևյալ կետերով.

- տարածաշրջանի սոցիալ-տնտեսական զարգացման հայեցակարգը երկարաժամկետ հեռանկարում,

- բնակավայրերի գործող և կանխատեսվող տնտեսական (գյուղատնտեսական, զբոսաշրջային, արդյունաբերական, մշակութային, գիտատար) մասնագիտացումները,

- տարածաշրջանային նշանակության ենթակառուցվածքների և օբյեկտների տեղաբաշխման ուրվագիծը,

- սոցիալական օբյեկտների առկա և կանխատեսելի տեղաբաշխման ուրվագիծերը,

- ինժեներական նախապատրաստման, տարածքների և բնակչության պաշտպանության բարձրացմանն ուղղված ծրագրերը,

- տարածաշրջանի զարգացման ներդրումային ծրագրերը:

Սյունիքի մարզը զբաղեցնում է Ջանգեզուր բնաշխարհի տարածքը, որը ներառում է Որոտան, Ողջի գետերի վերին ու միջին հոսանքների ավազանը և Ջանգեզուրի՝ Մեծ Կովկասից հետո Հարավային Կովկասում ամենաբարձր լեռնաշղթայի, արևելյան լանջերը: Մարզի ամենաբարձր լեռնագագաթը Կապուտջուղն է (3 906մ), իսկ ամենացածր վայրը՝ Մեղրու կիրճը (Արաքսի հովիտ 380մ):

Տեղը՝ Սյունիքի մարզի խոշորացված Տեղ բազմաբնակավայրի 7 գյուղերից մեկն է: Համայնքը գտնվում է մարզկենտրոնից 85.0կմ հեռավորության վրա: Նախորդ տարվա դրությամբ այն ունի 2255 բնակիչ: Ըստ պատմական վկայության, Տեղ գյուղը հիմնել է Սյունիքի թագուհի Շահանդուխտը՝ 10-րդ դարում: Մինչ այդ, Տեղի տարածքում եղել է քարանձավային բնակատեղի, որի մոտակայքում 4-5դ.դ. կառուցվել է սբ. Գևորգ եկեղեցին: Ուշ միջնադարում Տեղը եղել է մելիքանիստ գյուղ:

Նշված քաղաքային և գյուղական համայնքների ընդհանուր տարածքը կազմում է 15730.0հա մակերես:

Ըստ տարաբնակեցման համակարգի վերլուծության տարածաշրջանի գյուղատնտեսական հողերի զգալի տոկոսը բաժին է ընկնում Պառավաքար բնակավայրին (23.8%): Գրեթե համազոր մեծության են Բերդ (11.9%), Տավուշ (11.7%), Ներքին Կարմիրաղբյուր (11.3%) և Նավուր (13.5%) բնակավայրերի գյուղատնտեսական հողերի մասնաբաժինները: Մի փոքր ավելի ցածր տոկոս են կազմում Վերին Ծաղկավան (8.2%), Իծաքար (9.7%) Վարագավան (5.5%) և Չինչին (4.4%) բնակավայրերի գյուղատնտեսական հողատեսքերը:

Ըստ տրանսպորտային ենթակառուցվածքի, գծային տարրերի համակարգը հիմնված է տարածաշրջանի տարածքով ձգվող հիմնական հատակագծային գլխավոր գծային առանցքների՝ Մ-2, Մ-12, Հ-45, Ե-117, միջպետական և հանրապետական նշանակության մայրուղիների հիմնակմախքի վրա, որն էլ ապահովում է տարածաշրջանի տարածքում իրականացվող բոլոր գործառնական հատակագծային տեղաշարժերը: Մարզի տարածքով է անցնում Հայաստանն Իրանի Իսլամական Հանրապետության հետ կապող ավտոմայրուղին, որն էական դեր ունի մարզի տնտեսության զարգացման գործում: 2008թ. շահագործման է հանձնվել «Կապան-Ծավ-Մեղրի» ռազմավարական

նշանակություն ունեցող ավտոմայրուղին, որը այլընտրանք է «Կապան-Քաջարան-Մեղրի» միջպետական ճանապարհին և տեխնիկական ցուցանիշներով գերազանցում է վերջինիս:

Տարաբնակեցման տարածքային միավորների վերլուծության շրջանակում դիտարկվել են բնակավայրերով զբաղեցված և անտրոպոգեն ազդեցության ենթարկված տարածքները, գյուղատնտեսական հողատեսքերը, բնապահպանական տարածքները (անտառներ, ջրային մակերեսներ):

Համաձայն կետային տարրերի վերլուծության պարզվել է, որ ըստ տեղաբաշխվածության բոլոր բնակավայրերը ցրված են: Մայրուղու բարենպաստ մատչելիության գոտում տեղակայված են Տեղ և Քարաշեն բնակավայրերը: Մյուսները գտնվում են սահմանափակ բարենպաստ մատչելիության գոտում: Գրեթե բոլոր կետային տարրերը (բացառությամբ Տեղի) փակուղային են:

Տեղ համայնքի տարածքն ընդգրկում է 2 բնական լանդշաֆտային գոտիներ.

- չոր լեռնատափաստանային գոտի, որն ընդգրկում է Գորիս գետի ձախափնյա լանջերը,
- լեռնատափաստանային գոտի, որն ընդգրկում է Գորիս գետի աջափնյա լանջերը:

Չոր լեռնատափաստանային գոտում ռելիեֆը հիմնականում խիստ մասնատված է: Այստեղ առաջացել են բազմաթիվ լեռնային ձորակներ ու չոր հովիտներ, որոնց միջև վեր են բարձրանում սրածայր ատամնավոր միջձորակային կատարներ: Այդ պրոցեսներն իրենց բացասական ազդեցությունն են թողել բուսականության (հատկապես անտառային) և հողային ծածկույթի տարածքային տեղաբաշխման վրա:

Լեռնատափաստանային գոտին տարածվում է մինչև 2300.0մ բարձրությունները, զբաղեցնում է հիմնականում Գորիսի սարահարթը, որը գերազանցապես կազմված է հրաբխային ապարներով, մոտ 600.0մ հզորությամբ և հորիզոնական շեշտադրությամբ:

Անցումը անտառային տեղամասերից դեպի տափաստաններն անմիջապես չի կատարվում: Սահմանային շրջաններում զարգացած է ենթասանտառային բուսականությունը՝ մասրենի, ցաքի և զանազան թփուտներ: Տարածված են նաև տրազանտային տափաստաններ տարախոտա-հացաբույսերով:

Հետագա դասակարգման տաքսոնոմիկ միավոր է ընտրվել լանդշաֆտների քաղաքաշինական օգտագործման հետևյալ հիմնական ձևերը:

- Կառուցապատված և կառուցապատման ենթակա լանդշաֆտներ:
- Գյուղատնտեսական նշանակության հողահանդակներ:
- Անտառտնտեսության հողեր:

Տարածաշրջանի անտառները կազմում են 2647.5հա մակերես, որը կազմում է տարածաշրջանի վարչական տարածքի 8.2%-ը: Բոլոր անտառները պաշտպանական են, չունեն արդյունաբերական պաշարներ:

Առանձին բնակավայրերի վերլուծությամբ ի հայտ են բերվել համընդհանուր խնդիրների համալիր, որոնք առկա են գրեթե բոլոր բնակավայրերում:

- Հաղորդակցության ուղիների մասով՝ ներքին փողոցային ցանցի կարծր ծածկույթի նորոգման աշխատանքների անհրաժեշտություն, գիշերային լուսավորության համակարգի անցկացում:
- Ենթակառուցվածքների մասով՝ ջրամատակարարման, ոռոգման համակարգերի նորոգում, ընդլայնում, կոյուղու համակարգի իրականացում և նորոգման աշխատանքների կազմակերպում:
- Քաղաքային տնտեսության մասով՝ շենքերի ընթացիկ նորոգումներ, տանիքների վերանորոգում, հանրային տարածքների կազմակերպում:

Նախագծում հաշվի են առնվել նաև մարզի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով նախատեսված գերակայությունները: Ըստ տնտեսության առկա միջակի վերլուծություն տարածաշրջանն ունի ընդգծված ագրարային ուղղվածություն:



Բնակչությունը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ, դաշտավարությամբ, պտղաբուծությամբ, կարտոֆիլի և կերային կուլտուրաների մշակությամբ: Խորհրդային շրջանում լայն տարածում են ունեցել նաև ծխախոտագործությունը և ճակնդեղի մշակումը: Համայնքը ունի գյուղատնտեսական արտադրանքի վերամշակման և իրացման խնդիր:

Տարածաշրջանի համայնքները հարուստ են պատմության և մշակութային ժառանգությամբ:

Կատարվել է նաև սոցիալական ոլորտի հաստատությունների առկա վիճակի վերլուծություն և հեռանկարային պահանջի հաշվարկ՝ ըստ ՀՀԾՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» հանձնարարականների: Մատչելիության գոտիների հաշվառումով համայնքների տարածքներում տեղաբաշխված են նախակրթական և կրթական հաստատությունները, ներկայացված հիմնականում 2 հարկանի տիպարային նախագծերի հիման վրա կառուցված շենքերով: Տեխնիկական առումով դարձյալ որոշները հիմնանորոգված են, մյուսները՝ մասնակի նորոգված են և մնացած հատվածը գտնվում է ֆիզիկական և բարոյական մաշվածության աստիճանի և խիստ կարիք ունեն հիմնանորոգման, արդիականացման, սեյսմակայունության բարձրացման:

Բացառությամբ Կոռնիձորի և Քարաշենի, մնացած հինգ բնակավայրերում շինությունները տեղակայված են ոչ օրինաչափ կերպով, որը դժվարացնում է միջբնակավայրային ճանապարհների վերանորոգումը և դրանց լուսավորումը մատչելի եղանակով:

Ճանապարհային ցանցի բարելավման և արդիականացման արդյունքում առաջադրվել է բնակավայրերի միջև հաղորդակցությունն առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպում, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանություն և շահագործում, ճանապարհային ցուցանակների տեղադրում:

Առանձին բնակավայրերի հատակագծային կառուցվածքի և հեռանկարային առաջարկների շրջանակում պարզվել է, որ միկրոռեգիոնի գյուղական բնակավայրերի գերակշիռ մասի հատակագծային կառուցվածքները ձևավորվել են տարերայնորեն, պատմականորեն ձևավորված քաղաքային միջուկի շուրջ: Հանրային օբյեկտները հիմնականում կենտրոնացված են հենց այդ մասում, իսկ բնակավայրի մնացյալ հատվածն իրենից ներկայացնում է հիմնականում տնամերձ հողամասերով կառուցապատված թաղամաս: Բնակավայրերի ծայրամասային հատվածներից շատերում առկա են չօգտագործվող կամ չնչին մասով օգտագործվող արտադրական տարածքներ: Նախագծով առաջարկվել է դրանք վերակազմավորել արդի պահանջներին համապատասխան, տարածքային առավել խնայողական մոտեցմամբ, ազատված տարածքները վերակազմավորելով, որպես տարբեր տիպի հանրային տարածքներ (ուսումնասարհեստագործական, ստեղծարար տեխնոլոգիաների ներդրման, ժամանցային, մարզական և այլն):

Ներկա դրությամբ գյուղական համայնքներում ընդհանուր օգտագործման կանաչ տարածքները յուրաքանչյուր համայնքում կազմում են 0.1÷0.5հա: Շինարարական նորմերի համաձայն գյուղական համայնքներում ընդհանուր օգտագործման կանաչ տնկարկների մակերեսը պետք է կազմի 12մ<sup>2</sup>/մարդ, իսկ փոքր քաղաքների համար 10մ<sup>2</sup>/մարդ: Ըստ հիմնադրույթային փաստաթղթի ընդհանուր օգտագործման կանաչ գոտու մակերես կազմում է 1.966հա (3.46մ<sup>2</sup>/մարդ), իսկ հեռանկարում նախատեսվում է հասցնել 7.49հա (12.0մ<sup>2</sup>/մարդ):

Սահմանափակ օգտագործման կանաչ տարածքների մակերեսը ներկա դրությամբ կազմում է 201.186հա, որը հեռանկարում նախատեսվում է հասցնել 221.3հա (354.6մ<sup>2</sup>/մարդ),

Տարածքային զարգացման հատակագծային կազմակերպում բաժնում գոյություն ունեցող վիճակի վերլուծության հիման վրա տրված է հատակագծատարածական կառուցվածքի, ճանապարհային ցանցի և ինժեներական ենթակառուցվածքների բարելավման ու կատարելագործման ուղղությամբ հեռանկարային առաջարկությունների համակարգ: Առանձին ներկայացված են հողօգտագործման, բնակարանային ֆոնդի, հասարակական սպասարկման համակարգի, ջրամատակարարման և ջրահեռացման (կոյուղի) և ոռոգման, գազամատակարարման կատարելագործման նկատառումներ՝ համապատասխան հիմնավորումներով:

Նախագծի գործողության ժամկետում համայնքի առկա և հաշվարկային (հեռանկար) բնակչության թիվը համապատասխանաբար 5.674 հազ.մարդ և 6.241 հազ.մարդ:

«Սյունիք-8» համայնքներում կա 23 հատ աղբավայր: Աղբահանումը կատարվում է անկանոն, ինչը հանգեցնում է համայնքների սանիտարական վիճակի վատացմանը: Նախատեսվում է գոյություն ունեցող աղբավայրերի տարածքները պարսպապատել, բարեկարգել, աղբահանությունը դարձնել կազմակերպված, հողով ծածկել, մինչև ամբողջ համայնքների համար աղբամշակման գործարանի նախագծումը և կառուցումը: Գյուղական բնակավայրերում նախատեսվում է աղբակուտակման կազմակերպված հարթակների ձևավորում՝ հեռանկարային Գորիս քաղաքի տարածքում կազմակերպվող սանիտարական աղբավայր տեղափոխելու նպատակով:

Նշված յուրաքանչյուր գյուղական համայնքում տեղակայված է 1 գործող գերեզմանոց, որոնց սանիտարական գոտին պահպանված չէ, ուստի առաջարկվում է մշակել միջոցառումներ, որոնք կկարգավորեն գերեզմանոցների տարածքները:

Սյունիք 8-ում ներառված գյուղական բնակավայրերի ջրամատակարարումն իրականացվում է մակերևութային ջրաղբյուրներից: Ջրամատակարարման համակարգերի գլխամասային կառույցները հիմնականում չունեն սանիտարական պահպանության գոտիներ: Գյուղական բնակավայրերում բացակայում են օրվա կարգավորիչ ջրամբարները, և խմելու ջուրն անմիջապես տրվում է բաշխիչ ցանց՝ առանց վնասագերծման: Դիտարկվող տարածաշրջանի որոշ համայնքներում ներկայումս կա խմելու ջրի անբավարարություն՝ հատկապես ամռան ամիսներին: Բնակչությանն անհրաժեշտ քանակի խմելու ջրով բավարարելու, ինչպես նաև ջրամատակարարման համակարգերի կայուն աշխատանքն ապահովելու նպատակով նախատեսվում է վերջիններիս արդիականացում, նոր ջրատարների (Խնածախ /7.0կմ/ և Վաղատուր բնակավայրերում) և ՕԿՁ-ների կառուցում, ինչպես նաև բոլոր բնակավայրերում ներքին բաշխիչ ցանցի հիմնանորոգում:

Սյունիք 8-ում ներառված գյուղական բնակավայրերը չունեն կոյուղու համակարգ: Կոյուղու հոսքաջրերի հեռացումը կիրականացվի միջթաղամասային ինքնահոս կոյուղատարների և գլխավոր կոլեկտորի միջոցով:

Տեղ համայնքի գյուղատնտեսական հողատեսքերը ոռոգելու և ոռոգվող հողատարածքների ջրապահովվածությունը բարձրացնելու նպատակով տարածաշրջանում նախատեսվում է երկու նոր ջրամբարների հիմնում:

Տեղ համայնքի բնակավայրերից գազաֆիկացված չէ միայն Խոզնավար բնակավայրը: Տեղ, Կոռնիձոր, Արավուս, Խնածախ, Վաղատուր և Բարաշեն բնակավայրերի գազամատակարարումն իրականացվում է Տեղի գազարաշխիչ կայանից (ԳԲԿ):

Հաշվի առնելով սույն նախագծով ուսումնասիրվող տարածքի բնակիչների պայմանները, որպես այլընտրանքային էներգիայի աղբյուր նպատակահարմար է դիտարկել արևի էներգիան՝ ինչպես ջերմամատակարարման, այնպես էլ էլեկտրամատակարարման նպատակով:



Առանձին բաժնով տրված է համայնքի տեխնիկատնտեսական ցուցանիշների աղյուսակը:

Հիմնադրույթային փաստաթղթում ներկայացվել է նաև գոտևորման նախագիծը, որտեղ ամրագրված են հողատեսքերի գործառական նշանակություններով պայմանավորված գոտիները՝ իրենց հապավումներով, դրանց օգտագործման չափորոշիչների համալիրը:

Հիմք ընդունելով առկա վիճակի վերլուծությունը և ՀՀ կառավարության կողմից վարվող տնտեսական քաղաքականությունը կարող ենք նախանշել, որ զարգացումը մարզում կապահովվի հետևյալ ուղղություններով.

- լեռնահանքային արդյունաբերության արդյունավետության բարձրացում և բնապահպանական ռիսկերի առավելագույնս նվազեցում,
- էներգետիկ ռեսուրսների արդյունավետ օգտագործում,
- արդյունաբերության ճյուղերի դիվերսիֆիկացում, ձևավորելով նոր արտադրություններ, որոնք միտված կլինեն ինչպես արտահանմանն, այնպես էլ տեղական լեռնահանքային հսկաների սպասարկմանը,
- գյուղատնտեսության և գյուղական տարածքների արդիականացում՝ համակցված բնապահպանության հետ,
- մարզի աշխարհագրական դիրքի առավել արդյունավետ օգտագործում, մասնավորապես Հյուսիս-հարավ տրանսպորտային ենթակառուցվածքի շուրջ տարբեր ծառայությունների ձևավորում և Մեղրու ազատ տնտեսական գոտու կայացում, այլ ենթակառուցվածքների զարգացում,
- զբոսաշրջության զարգացման խթանում, ապահովելով անհրաժեշտ ենթակառուցվածքներ:

Միջոցառումները կտեղայնացվեն մարզի տարբեր տարածաշրջաններում առկա ներուժին և զարգացման հեռանկարներին համապատասխան:

Միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման նախագծի հայեցակարգային, սոցիալ-տնտեսական հիմնավորումը նպատակաուղղված է տարածաշրջանի՝ որպես ամբողջական հատակագծային միավորի և համայնքների՝ որպես դրա մասը կազմող, փոխադարձ տարածքային, տնտեսական և ենթակառուցվածքային կապերով միմյանց կապված բաղադրիչների ներքին պոտենցիալ հնարավորությունների և նախադրյալների բացահայտմանը, դրանց լիարժեք, համակողմանի և արդյունավետ օգտագործմանը: Հանդիսանալով տարածական պլանավորման փաստաթղթերի հիերարխիական կառուցվածքի երեք մակարդակը (տարածքային հատակագծման նախագիծ, գլխավոր հատակագիծ, գոտևորման նախագիծ) միավորող փաստաթուղթ, այն դիտարկում է ինչպես տարածաշրջանային նշանակության և կարևորության ընդհանուր մոտեցումները, այնպես էլ յուրաքանչյուր հատակագծային միավորի՝ համայնքի տարածքում իրականացվող քաղաքաշինական գործունեության կանոնակարգումը, հետաանդելով մեկ նպատակ՝ բնակչության և այցելուների համար ձևավորել առավել հարմարավետ, անվտանգ, ապահով և գեղագիտական բարձր հատկանիշներով օժտված գրավիչ կենսամիջավայր:

Վերլուծելով և ամփոփելով հիմնադրույթային փաստաթղթի լուծումների արդյունավետությունը, բնապահպանության նախարարության համապատասխան ստորաբաժանումներից ստացված կարծիքները, առողջապահության և գյուղատնտեսության նախարարությունների կարծիքը, ինչպես նաև փորձաքննության գործընթացում ի հայտ եկած դիտողություններն ու առաջարկությունները, Սյունիքի մարզի Տեղի համայնքապետարանում իրականացված հանրային քննարկումների արդյունքները կարելի է անել հետևյալ եզրահանգումները:



Սյունիքի մարզի Տեղ համայնքի և հարակից գյուղական բնակավայրերի տարածքային քաղաքաշինական խնդիրների լուծման ընթացքում շրջակա միջավայրի պահպանության արդյունավետ կազմակերպման համար համալիր կերպով գնահատվել է առկա բնապահպանական խնդիրները, գոյություն ունեցող իրավիճակը և ընտրվել են զարգացման այնպիսի սկզբունքներ, որոնք թույլ կտան ներդաշնակորեն լուծել սոցիալական, տնտեսական և բնապահպանական խնդիրները: Բնակավայրի տարածքի կարևոր էկոլոգիական հիմնախնդիրների լուծումը, նպաստելու է տարածքի էկոլոգիական հավասարակշռության պահպանմանը: Շրջակա միջավայրի պահպանության բաժնում տրվել է համալիրի առանձին տարրերի՝ օդային, հողային, ջրային ավազանի սանիտարահիգիենիկ վիճակը, նրա բարելավման ինժեներական տեխնոլոգիական և ագրոմելիորատիվ միջոցառումները:

### Փորձաքննական պահանջներ

1. Հիմնադրույթային փաստաթղթի շրջանակում նախատեսվող գործունեությունների համապատասխան նախագծային փաստաթղթերը՝ մինչև իրականացումը, անհրաժեշտ է օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել բնապահպանության նախարարություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:
2. Հիմնադրույթային փաստաթղթի դրույթների իրականացման ընթացքում կատարել ազդեցության մշտադիտարկում (մոնիթորինգ), կազմել հետնախագծային վերլուծության ծրագիր, ինչը պետք է հասանելի լինի պետական շահագրգիռ մարմինների և հանրության համար:

### ԵՐՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Հայնախագիծ>> ԲԲԸ կողմից ներկայացված Սյունիքի մարզի Տեղ համայնքի միկրոռեգիոնալ մակարդակի՝ համակցված տարածական պլանավորման փաստաթղթի (Սյունիք-8) շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Տնօրենի տեղակալ

Գլխ. մասնագետ



Ա. Դոնոյան

Կ. Մովսիսյան